ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 02/993

«20» 01 2025թ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՍԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Աղաբաբյան,

Ի պատասխան սույն թվականի հունվարի 8-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարություն հասցեագրված՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում դեղձենու, արևելյան խուրմայի, թզենու, կեռասենու, ծիրանենու և սալորենու լրիվ պտղաբերության անցնելու մասին Ձեր գրության՝ ներկայացվում է սերմնաբույսի վրա պատվաստված տնկանյութով հիմնված այգիների՝ պատշաճ խնամքի ու մշակության (ագրոտեխնիկական կանոնների պահպանմամբ) դեպքում այգեհիմնումից հետո լրիվ պտղաբերման անցման ժամկետները՝ համաձայն աղյուսակի:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ցածրաճ պատվաստակալներով պատվաստված տնկանյութով հիմնված այգիները կարող են անցնել լրիվ պտղաբերության ավելի վաղ ժամկետներում, որի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմաններում բավարար արտադրական ու գիտական փորձ դեռևս առկա չէ, իսկ անհրաժեշտ գիտական տվյալներ հնարավոր է ստանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և «aygi.am» կայքի էլեկտրոնային գրադարաններից, ինչպես նաև միջազգային գիտական հրապարակումներից:

Աղյուսակ

Սերմնաբույսի վրա պատվաստված տնկանյութով հիմնված այգիների լրիվ պտղաբերման անցման ժամկետները

N	Պտղատեսակ	Լրիվ պտղաբերության անցման ժամկետ (տարի)
1	Արևելյան խուրմա	5-6
2	Դեղձենի	4-5
3	Կեռասենի	8-10
4	Ծիրանենի	10-12
5	Սալորենի	8-10
6	Թզենի	5-6

Հարգանքով՝

Recoverable Signature

X

Signed by: SARGSYAN TATEVIK 6501850924

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝
Այգեգործության և օրգանական գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, Արման Մարտիրոսյան
011524610